հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված հայցապահանջին:

Հաշվի առնելով, որ հայցվորի կողմից նախապես վճարվել է պետական տուրքի գումարը, իսկ հայցն ենթակա է մերժման, ուստի Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Դատարանը, նկատի ունենալով, որ սույն գործի շրջանակներում այլ դատական ծախսերի հետ կապված պահանջ չի ներկայացվել, գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Դիավանտ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության, պատասխանող կողմում որպես ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-23-9/3 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության 3.1 որոշումը անվավեր ճանաչելու, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում, այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ գործադիր թերթի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՇԻԼԱՋՅԱՆ**